

Միս-մինակ , անխօսուկ , աշուրները մարած ,  
Տըժգոյն ճամբուն մէջէն , Մանր կ'անցնի կ'երթայ .  
Մազերն հովուն կուլան , ու ձեռքը՝ կիտաբաց՝  
Խաչխաչներ կը թօթվէ յողնած կեանքին վրայ :

ՏԵՐՎԻՇ

## ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԷՒԹԻԻՆԸ ԵՒ ՆՊԱՏԱԿԸ

Մարդկային մտքի եւ ոգու արտայայտու-  
թիւնները՝ գիտական ուսումնասիրութեան  
նիւթ դառնալիս՝ տարբեր ժամանակներում  
ուղղութիւնների տարբեր շրջանով են անցել :  
Բայց մի աչքի ընկնող եւ որոշ չափով հաս-  
կանալի հետեւողականութեամբ այդ արտայայ-  
տութիւնները եւ կամ նրանցից առաջացած ու-  
րոշ համախմբումները որքան բարդ են եղել  
ըստ էութեան , որքան խորհրդաւոր եւ հո-  
գեքանօրէն դժուարըմբռնելի , նրանց բացա-  
տրութիւնն էլ փոխադարձաբար նոյնքան մութ ,  
նոյնքան երեւուն է եղել , գրական հիմքե-  
րից միանգամայն հեռու , միստիքական ան-  
թափանցիկ քողով չղարշուած կամ բնազանցա-  
կան անսանձ մտքի մտայլ շերտերով խտա-  
ցած : Արեւելեան եւ արեւմտեան համարեա-  
բոլոր ազգերի քաղաքակրթական զարգացման  
երկարածիք ընթացքում նկատելի է այս բնո-  
րոշ գիծը , որին անխտիր կարելի է հետեւել  
ոչ միայն բնագիտական ըմբռնման մանկական  
չըլաններում , այլ եւ այն հասկացողութիւն-  
ների ամբողջութեան մէջ , որոնք պարտուում  
են կրօնի , բարոյականութեան , իրաւունքի  
եւ գեղարուեստի շուրջը :

Այստեղ ուր քննութեան եւ չըլանկատ հե-  
տադասութեան փոխարէն տրուում է միայն  
վստ եւ սընթաց երեւակայութիւնը , վեր-  
լուծման փոխարէն՝ վերացական մտքի թռիչքը  
եւ բնազանցական ընդհանրացումների տենչը ,  
յիբաւի անբնական կը լինէր մի ուրիշ հետե-  
ւանք սպասել :

Բնազանցութեան յատկանշական գծե-  
րից մէկն է ամենադիտարկելը՝ Մինչդեռ գի-

տութիւնը որ եւ է բարդ եւ առժամանակ ան-  
լուծելի մի երեւոյթի առաջ կանգ առնելիս ,  
ըմբռնելու եւ հասկանալու ծարաւով պապակու-  
մ է եւ միւս կողմից համեստութեամբ խոստովա-  
նում է՝ Չգիտեմ , բնազանցութիւնը մի յա-  
ւակնոտ ինքնավստահութեամբ ճգնում է ման-  
րակրկիտ երեւոյթների ամենակնճոտ ցանցը  
պարզել , արեւգիւղի ամենախոր դաղանիքը  
լուծել : Ոչ մի առեղծուած , ոչ մի խորհրդ-  
դաւորութիւն նրա համար գոյութիւն չունին .  
կամ թէ ծայրայեղ դէպքում՝ իւրաքանչիւր  
առեղծուածի հետ կարծես նրան շնորհուած է  
լինում եւ ամենազօր բանալին . բաւական է  
մտքի մի յանդուգն եւ կամայական շարժում ,  
եւ անա գործեան ամէն մի հանգոյց անհե-  
տացած է նրա համար :

Մի սրամիտ եւ վերին աստիճանի յաջող ար-  
տայտութեամբ՝ Սէն-Սիմոնը զնում է մեր ա-  
ռաջ բնազանցութեան ամբողջ կորիզը . «Բնա-  
զանցութիւնը տարբերում է գիտութիւնից  
նրանով , որ նա ձգտում է ամեն ինչ՝ նախա-  
տեսել՝ առանց սակայն դեռ մի բան տեսած լի-  
նելու , այնինչ գիտութիւնը նախ ճշնանում է  
եւ ապա նախատեսում » :

Բնազանցութեան եւ առհասարակ վերացա-  
կան մէթոտի տիրապետութիւնը ուժեղ կեր-  
պով նկատելի է ինչպէս բարոյագիտութեան  
նոյնպէս եւ էսթետիկի սահմանում : Այս մեթոտի  
գլխաւոր յատկութիւնն է՝ փոխանակ հոգեբա-  
նական վերլուծութեան — որը ներկայփորձաւ-  
կան ուղղութեան հիմնաքարն է կազմում —  
մի քանի բարձրագոյն գաղափարներից առա-  
ջացնել էսթետիքական այս կամ այն գաղա-  
փարը . օր . , «գեղեցիկ» գաղափարից «ողբե-  
րական» կամ «կատակերգական» գաղափարը  
են :